

սումնասէր Թագուհի դուստրը, որ պայծառ զարդ
եղաւ Տիւղեան տան իւր ուսումնականութեամբը,
եւ մանաւանդ հայերէն լեզուի մէջ ըրած յա-
ռաջագիմութեամբը. նոյնպէս Իսկուհի՝ դուստր
Յովհաննու, արժանացաւ իւր հայերէնի ուսուց-
չէն, որ էր Հ. Արսէն Ա. Բագրատունի՝ « հայ-
կաբան » պատուաբեր տիտղոսին:

1807ի քաղաքական աննպաստ դիրքը՝
ծանրապէս կը սպառնար Յովհաննու եւ բոլոր
Տիւղեան տան. սակայն ի ժամանակին բարերա-
րութիւններով շահուած բարեկամաց, եւ մանաւ-
անդ Սուլթան Սէլիմի պէս իմաստուն թագաւո-
րին խնամօքն այս չարագուշակ ամպերն շուտով
փարատեցան: Վկաւ երկինք զուարթանալ, բայց
կարճ ժամանակ. որովհետեւ Սուլթան Սէլիմի՝
ազնուասիրտ խնամածուին եւ հօր՝ տարածամ՝
մահը՝ զՅովհաննէս Չէլէպի սաստիկ տրտմեցուց
եւ պատճառ եղաւ սրտի ջրգողութեան ծանր
եւ երկարատեւ հիւանդութեան: Թէեւ Սուլթան
Սէլիմի յաջորդն՝ Սուլթան Մահմուտ միեւնոյն
հայրական խնամօք կը նայէր իւր հաւատարիմ՝
ծառային՝ Յովհաննու եւ բովանդակ Տիւղեան
ընտանեաց, բայց Յովհաննու հիւանդութեան
հետեւութիւնն անողոք եւ անդարմանելի էր.
մանաւանդ որ Չէլէպին բաւական հասակ մ'ու-
նէր: Այսպէս 1812 Ապրիլ 9ին՝ 63 տարւան
փակեց Յովհաննէս Չէլէպի այն քաղցր աշուրներն՝
որ միայն քաջախերութիւն եւ խրախոյս կը շնչէին:
Սուլթան Մահմուտ իւր ծառային սգալի մահուան
ցաւակից եղաւ, եւ ի նշան իւր մեծարանաց եւ